



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 4 » փետրվարի 2022թ.

№ 103-Ը

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ  
58-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի  
1-ին մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի փետրվարի 24-ի «Հիմնադրամների  
կողմից հրապարակվող հաշվետվության ձևը, լրացման կարգը, հաշվետվության  
հրապարակման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների կոմիտե ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 58-Ն  
հրամանում (այսուհետև՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունը.

Հրամանով հաստատված «Հավելված N 2»-ի 11-րդ կետը շարադրել հետևյալ  
խմբագրությամբ.

«11. Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների  
վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը կցվում է  
հաշվետվությանը, եթե հաշվետու տարվա վերջի դրությամբ հիմնադրամի ակտիվների  
հաշվեկշռային արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը:»



2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



ԴԱԿԻԹ ԱՆԱՆՅԱՆ